ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2021 թվականի N 106 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածին, 34-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9-րդ կետում «Վերապատրաստմանը» բառը փոխարինել «Մեկանգամյա վերապատրաստմանը» բառերով.

2) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11. Քաղաքացիական ծառայողը վերապատրաստվում է գլխավոր քարտուղարի կողմից ընդունված անհատական իրավական ակտի հիման վրա, իսկ համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը՝ համապատասխան մարմնի ղեկավարի կողմից ընդունված անհատական իրավական ակտի հիման վրա։».

3) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«22. Քաղաքացիական ծառայողը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում ընտրում է այն մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերապատրաստման կարիքները, որոնց ձեռքբերումը կամ կատարելագործումը նպաստելու է իր

պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը:».

4) 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«23. Անմիջական ղեկավարը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում ընտրում է այն մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերապատրաստման կարիքները, որոնց ձեռքբերումը կամ կատարելագործումը, ըստ անմիջական ղեկավարի, նպաստելու է քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը:».

5) 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«24. Քաղաքացիական ծառայողի և անմիջական ղեկավարի կողմից քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վերապատրաստման կարիքներն ընտրվելուց հետո դրանք տրամադրվում են անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը:».

6) 25-րդ կետից հանել «թերթիկներում» և «նոր թերթիկում» բառերը, «լրացրած» բառը փոխարինել «ընտրած» բառով, իսկ «լրացնում» բառը՝ «ընտրում» բառով.

7) 39-րդ կետից հանել «Հեռավար ուսուցման մոդուլներով վերապատրաստման դեպքում արդյունքները (թեստավորման առաջադրանքներից ստացված տոկոսները) մուտքագրվում են ինքնաշխատ եղանակով:» նախադասությունը.

8) 48-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«48. Հեռավար ուսուցման մոդուլներով վերապատրաստման ընթացքում քաղաքացիական ծառայողը յուրաքանչյուր շաբաթ՝ մեկ օր, ազատվում է ծառայողական պարտականությունների կատարումից քաղաքացիական ծառայության իր զբաղեցրած պաշտոնի, ստաժի և վարձատրության պահպանմամբ՝ համաձայնեցնելով և գրավոր տեղեկացնելով անմիջական ղեկավարին, իսկ ստորաբաժանման ղեկավարների դեպքում՝ գլխավոր քարտուղարին:».

9) 59-րդ կետում «միջին թվաբանականը» բառերը փոխարինել «հանրագումարը» բառով.

10) 64-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«64. Սույն հավելվածի 63-րդ կետով նախատեսված վերապատրաստումներին մասնակցության դեպքում գլխավոր քարտուղարը կարող է դիմել գրասենյակ՝ նշված վերապատրաստումները հատկացված կրեդիտների հետ միասին քաղաքացիական ծառայողի վերապատրաստման անհատական ծրագրի «Անհրաժեշտ վերապատրաստումներ» բաժնում ներառելու համար՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:».

11) ուժը կորցրած ճանաչել 6-րդ գլուխը.

12) ուժը կորցրած ճանաչել NN 1 և 2 ձևերը.

13) N 3 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ձև N 3

Ս Ա Ն Դ Ղ Ա Կ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՇԵՄԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ		ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ	
		մասնագիտական վերապատրաստումներից	կոմպետենցիաներից
Դրական	90 - 100	Կատարողականի այս արդյունքն ունեցող քաղաքացիական ծառայողների համար չի սահմանվում անհրաժեշտ կրեդիտների շեմ (քաղաքացիական ծառայողը կարող է ընտրել վերապատրաստման մեկ ծրագիր)	
	75 - 89	15 կրեդիտ	
	60 - 74	25 կրեդիտ	
Բացասական	<60	35 կրեդիտ	

»:

2. Սույն որոշումը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ